Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 և 3 ամսուանը 3 ո. և մի ամսուանը 1 ո.։

Առանձին համարը 7 կոպէկ։

Համաձայնագրուած ինն տպագրատառ և հայերենական գրամասնաններով։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis. Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամէն յիշատակ։

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՕՐԵԱ ԳՐՈՒԹ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունւում է ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ (Վերահիմնուածի փողոց, № 22, տուն Յակոբյանցների) և ՀԱՅՈՑԴՐԱՏՈՒՆԻՆ ԿՐԻՄԵԱՆԻՆ-ՅՈՒՐԻ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՄԷ ՏԱՐՈՒԱՆՈՒՄ ՈՒ ՄԷ ԱՄՍՈՒԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ՌՈՒԲԼԻ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ՌՈՒԲԼԻ

Տարարաժասպագիր պէտք է գինն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang“

Յայտարարութիւնները ընդունւում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՀՈՒՆՈՒՄԻ ԳՐԻՒՐԵՆՆ ՈՒՏՈՒՐՈՒՆՆ, ՍՈՂՈՄՈՆ ՈՂՈՐՈՒՆԴՊԵՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ իւր ամուսնոյ հետ ցաւօք սրտի յայտնում են—առաջինը իւր քոյրը, երկրորդը՝ հօրորդը և երրորդը սիներոր

ԿԵՂԻ ԳՐԻՒՐԵՆ ԹՈՒՆԴՈՒՑԵՆՑԻ

մարդ և խնդրում են բարեկամներին, ազգականներին և ծանօթներին չնորհ բերել մասնակ հանդիսին, որ կ՚լինի է ամսոյս 17-ին, հինգշաբթի, առաւոտան 9½ ժամին, իւր սեպհական տանից (Վերհոմինովսկայա № 9) դէպի Քանդրյեան եկեղեցին։

Մերիմը կրկին չորեքշաբթի, երեկոյեան 7½ ժամին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին կէսերը Թիւրքիայում։

— ՀԱՐՑԱԿԱՆ ՎԵՐՋԸ

Հնազանդը ամսոյս 12-ից յուր բնակից, որ գնացքներին և Թիֆլիսի փաստի մէջ համաձայնութիւն է կայացել սահմանադիր մասին, որ որոշել էին պետութեանց միասրտական գործակցութեան ոգով։ Այս մասին ուլեման համաձայնութիւնն եղել է և մի քանի տարի է որ հաստատուած է Թրան կողմից գեսպանները, ուրեմն խաղաղութեան դիմաւոր պայմանների մէկը մնում է, և ոսմանի զօրքերը, ինչպէս տարուում է հնազանդութեան, սկսել են հեռանալ Թեսսալոնիկից։ Մնում է այժմ պատկառազմական ծախուց վարձատրութեան և այլ մի քանի երկրորդական խնդիրներ, որոնք, երևի, ծոյլանալ չուտով վերջ կտրանան, թէև, ինչպէս տեղեկացանք են լրագիրները, սահմի կառավարութիւնը միաբ ունի պրանց ել ձգձգել և յոյս է ասծում, որ այդ խնդիրների քննութեան ժամանակ կարող է տարաձայնութիւն ծագել պետութեանց մէջ և իրան էլ յաջող պատր ցոյս ձուլ պրալ և պետութեանց անհամաձայնութիւնից օգուտ բաղել։ Բայց յուսալի է, որ Թրան այդ յոյսը խաբուսիկ դուրս գայ, որովհետև պետութիւնները այնքան լաւ փոքենգին, սուլթանի և Թրան կեդծաւորութիւնն ու խարեբայութիւնները, որ գժուար թէ սուլթանն և Թուրք կարող լինեն խանդարել պետութեանց համաձայնութիւնը, թէ Յանձնաժողի ու Ծուխաստանի մէջ հաստատուելիք խառազգութեան պայմանների և թէ Տայկական խնդրի վերաբերութեամբ Յանձի կատարուելիան գործադրելիք միջոցները էլի պիտի լինին պատերազմական կուսակցութեան դիմադրելիք։ Ժողովրդի յուզմունքն և այլ նոցա նման իրօք գոյութիւն չունեցող և սահմի կատարութեանն մասցածին և սանձած տիպարկ սուլթանները, որոնք այժմ չատ պարզ են պետութեանց համար։ Թրանը սահմի կատարութեան, պրանից սուլթանի խրատչիներն են, որոնցով ցոյտ կարողացել է ծոյ վչել երբեմն էլ, թէ նրանը էլ ծանրացնել խնդիրներ և բարձր նրանց Տայաստանում և Կ. Պոլսում կատարած կատրածներից ըրնականութիւնն ապացուցելին, որ թէ քրդերի չարժման և թէ ժողովրդի յուզման ու ոգեհանդութեան ոյնը ներկայ Քեսրչի է։ Հանաակ սուլթանի կարիքն ոչ մի ժամնեցական ձան կատանում տնդից չի չարժիլ Քարժուններ կայող են լինել միայն նրանք, որոնք գժգոհ են ներկայ կառավարութիւնից և կրչալ ժողովի միայն նրա դէմ. բայց ոչ իրանց գրացիներին կատրելու համար Ամեն բանի պատասխանատուն թէ սուլթանի վրայ է ընկնում։ Բայց ինչպես կարող է ներկան նրան իր արդար պատնեշներն ընդունել ապրելու համար։ Մեռած այժմ պատկառազմական ծախուց վարձատրութեան և այլ մի քանի երկրորդական խնդիրներ, որոնք, երևի, ծոյլանալ չուտով վերջ կրտանան, թէև, ինչպէս հաղորդում են լրագիրները, տահմի կառավարութիւնը միաբ ունի պրանց էլ ձգձգել և յոյս է ասծում, որ այդ խնդիրների քննութեան ժամանակ կարող է տարաձայնութիւն ծագել պետութեանց մէջ և իրան էլ յաջող պատր ցոյսի առիթ կարող լինին և այդ ոյժի գործադրութեան երկիրը գնալը սուլթանի առաջ. Սակայն կռռոցների չնայ, ոչ Հայաստանի այլ կռռոցածները տակ կ՚ընկնեն և ոչ էլ Թուրք-յուհանման պատրաստը և Տայկական բարեփոխութեանց ու Պրամէի իրն գիմեն էլ ամենայն հնչուտեամբ և առանց արիւնհեղութեան մեռանած կըլինէին։

Տահմին գիջումն անել աստղ միշտ ապրէ գիտէրի (Իուսաց) թոխուն է ևղել։

— ԹՒՐՔԵՐԸՆ ՎԱՒՆԱՏ Է

„Frankfurter Zeitung“-ի Կ. Պոլսից Տաղորում են, որ սուլթանը գիջանել սկսաւ բոլորովին, երբ սապատ Բերրիէի տահմին գնացած Ղալիբ բէյի Տետ, որ գիջացնում էր թէ պետութիւնները, առանց բացառութեան և Գերմանիայի, Տամաձայնութիւն են կայացրել տահպատանի միջոցների մասին, որոնք պէտք է գործ դրուին, եթէ Թուրք չարունակի իւր յամառութիւնը։ Իսկ ինչ պիտի բռնի սուլթանը իրան տահպատանի համար։ Ամեն ինչ կարող է ներսին և կրկին ապրել ապրելու համար։ Ամեն ինչ կարող է ներսին և կրկին ապրել ապրելու համար։

— ՆՈՐ ԳՐՕՆԱՆՑՆ ՔԱՂԱՔԱՑԻԱՑՈՒԹԻՒՆ

„Standard“-ի Կ. Պոլսի թղթակից Տաղորում է, թէ սուլթանը, չնայելով որ դանդաղեցնում է Քուհանան խնդիրի Տարցերով, գնում է ժամանակ կրօնական բարքավանութեամբ էլ զբաղելու։ Ցսպիսի բայլերից ամենաչարագոյնները մէկը Տանարիի և այն խնամ պահանջն, որ նա ապրում է Բեւնարիայի, Ալբերի, Եգիպտոսի, Պարսկաստանի և Տնդուց արևելքի մահմեդականներին, նա պահանջում է որ այդ երկրների ուղղափառները ամեն ապրամի ժողովի գլխերին ներում և լսեն ալիսների և իմամների բարոյները։ Այս վերջինները չարունակ հրամանագիր են առանում մահմեդական սիւնհոդոսից, որ ամեն նրեքշաբթի Տաւաքում է Եղլդըզ-Քեօշկում կրօնական բարքավանութիւնը դիսկուսելու համար։

Տահմին գիջումն անել աստղ միշտ ապրէ գիտէրի (Իուսաց) թոխուն է ևղել։

—

ԹՒՐՔԵՐԸՆ ՎԱՒՆԱՏ Է

„Frankfurter Zeitung“-ի Կ. Պոլսից Տաղորում են, որ սուլթանը գիջանել սկսաւ բոլորովին, երբ սապատ Բերրիէի տահմին գնացած Ղալիբ բէյի Տետ, որ գիջացնում էր թէ պետութիւնները, առանց բացառութեան և Գերմանիայի, Տամաձայնութիւն են կայացրել տահպատանի միջոցների մասին, որոնք պէտք է գործ դրուին, եթէ Թուրք չարունակի իւր յամառութիւնը։ Իսկ ինչ պիտի բռնի սուլթանը իրան տահպատանի համար։ Ամեն ինչ կարող է ներսին և կրկին ապրել ապրելու համար։ Ամեն ինչ կարող է ներսին և կրկին ապրել ապրելու համար։

—

ՆՈՐ ԳՐՕՆԱՆՑՆ ՔԱՂԱՔԱՑԻԱՑՈՒԹԻՒՆ

„Standard“-ի Կ. Պոլսի թղթակից Տաղորում է, թէ սուլթանը, չնայելով որ դանդաղեցնում է Քուհանան խնդիրի Տարցերով, գնում է ժամանակ կրօնական բարքավանութեամբ էլ զբաղելու։ Ցսպիսի բայլերից ամենաչարագոյնները մէկը Տանարիի և այն խնամ պահանջն, որ նա ապրում է Բեւնարիայի, Ալբերի, Եգիպտոսի, Պարսկաստանի և Տնդուց արևելքի մահմեդականներին, նա պահանջում է որ այդ երկրների ուղղափառները ամեն ապրամի ժողովի գլխերին ներում և լսեն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը „Արձագանք“-ի բաժանորդ գրուողը պիտի Տասուցանէ 6 ռ.։

Պետական բարձրագոյն շրջանների վարչական կեանքում վարոց խնդիր կար Թուխայի այժմեան նարկանութեան տեսակը փոխելու և բարեբերու նկատմամբ նախարարութեան այժմ մեծ պահանջը մշակել Տարկանհանձնաժողովի նոր նախագիծը և առաջիկայ աշնանը պիտի առաջարկի պետական խորհրդի վատրաժման։

***

Քանի անգամ մենք նկատել ենք, որ մեր երկրի պետական հաստատութեանց ծանկէտն նպատակու համար մեր չունի թիֆլիսում բանալ և հատուկ դանագան չնչամապահական կազմակերպութեան, փորձական դաշտը կազմ այդ պէտք է անել գատաստարում, ուր ապրում է բուն երկրագործ, դիւղացուհս ժողովուրդը։ Ցչժմ ապահովութեամբ լսում ենք, որ երկրագործական նախարարութեան միջոցներով երկու փորձական դաշտ տեղ են բացուում այս ամսի Քանձակի երկրագործական կայարանի մօտ և Բագուի Նահանգի Գեօկչայ ամանում։ Այդ փորձական դաշտերում պէտք է դիւղացիներին գործնականապես ծանօթացնեն ջամբակի մշակութեան գործնականապես ծանօթացնեն ջամբակի մշակութեան գործի հետ։ Վերջապէս։

***

Որովհետև կառավարական շրջաններում խնդիր կայ Կովկասում երդուեալների դատարան հաստատելու, ուստի թիֆլիզի նահանգական դատարանը այժմ տեղեկութիւններ է ժողովում այն անձանց մասին, որոնք ձեռնհաս կրլինին երդուեալ դատաւորների պարտաւորութիւնները վարելու։

***

Կովկասեան կրեական էքսպեդիցիա—ինչպես լսել է ՀՀով. Օթգոր.>—մշակիր է դիմել Կովկասեան նահանգական էքսպեդիցիաներին և խնդրել, որ թոյլ չտուին գիտնդրում գրաստարանները և ընկերցարանները բանալ, առանց կրեական էքսպեդիցիաների թոյլտուութեան։ Այդ պատճառով էքսպեդիցիան ստիպուած է ինքն իրան բանալ գրաստարան և ընկերցարան։

Գիտնական ընկերութիւն։—Ֆ. Բարխուդարեանի քանասեղծական ընթերցուածները։

ՊՐՈՒՍԱՑՈՒՄՆ։—Նամակ Եղկէ Լիեց։ Նամակ Թաշտից։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԵՐԷՆ

ՏԵՂԵԿՈՒՏԻՒՆ

ՏԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՊԻՊԼՈՄ

ՀԱՅԿ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԱՏԳԱՐԻ

Գործիչ մէկ գործողութեամբ, հետեւանքին

(Շարունակութիւն և վերջ *)

ՏԵՍԻԼ 10.

ՆՈՅԵ, ՄՈՍԷՅ, ՍԻՄՈՆ և ՀՈՒԴԱ

(Բոլորն էլ նոյնս են մնում ընդհանուր տեսարից և յարմարում)։

Մակար. — Ներեցէք մեզ, պարոն Նեթանէս, յանցանքը իմն է, ես սպասեցնել տուի։ Այսի գրանից առանց ձեր հրաւէրի նոյնս բերի մեր վարուց կարած պարոն Մալիասեանին (Նկատելով Գիլբաանթենցին)։ Մ՚, դուք ես պատեղ էք, պ. Գիլբաանթենց, երևի չէք ծանօթ պ. բժշկի հետ, Միմոնեան Մալիասեանի, և պ. Գիլբաանթենի Խնդրեմ, առանց ձեռակնոցների։ (Բոլորն էլ միմեանց ձեռքերը)։

Գիլբ. Մալիս. (միասին)—Շատ ուրախ եմ։

Նեթանէս.—Մեր ամենահաճոյքն ա գիտաասքներից մէկը։

Մալիս.—Այդքան գովեստ արժանի չեմ. մեր շրջանը փոքր է, բոլորովին այլ է Թիֆլիսում գործել, այլ է գատական քաղաքում։

Գիլբ.—Իմ կարծիքով, պ. Մալիասեանին, կամ յարդելի գծկատը (բժիշկ), պատասում ասելի դժուարին է գործել։ Այստեղ ընդդիմութիւնը և խոչընդոտները ասելի մեծ են։

Զաքար.—Ոչ, (պ Միմէոն), բարեկամ, ընդհակառակը մեզ գատասխան գործիչներ են հարկաւոր. արդէն Թիֆլիզը մեր ձեռքն է։

Մալիս.—Բայց չէ որ Թիֆլիզը ամբողջութեան սիրան է կազմում, չէ որ ամբողջ ասացնի թելերը այստեղից են ձգվում։

Նեթանէս.—Ներեցէք մեզ, պարոն Նեթանէս, յանցանքը իմն է, ես սպասեցնել տուի։ Բայց գանից առանց ձեր հրաւէրի նոյնս բերի մեր վարուց կարած պարոն Մալիասեանին (Նկատելով Գիլբաանթենցին)։ Մ՚, դուք ես պատեղ էք, պ. Գիլբաանթենց, երևի չէք ծանօթ պ. բժշկի հետ, Միմոնեան Մալիասեանի, և պ. Գիլբաանթենի Խնդրեմ, առանց ձեռակնոցների։ (Բոլորն էլ միմեանց ձեռքերը)։

Գիլբ. Մալիս. (միասին)—Շատ ուրախ եմ։

*) Տես «Արձագանք» № 78.

Գիլբ.—Իմ կարծիքով, կարելի էր մի համալսարանական նշանակէլ, որ ես նոյնս պատասուր դիպուած ձեռքս ասելի ուժեղ է քան ասելօք։

ՏԵՍԻԼ 11.

ՆՈՅՆԵ ԵՒ ԳՈՆՈՐՈ

Գոնոր. (Գասլիճի գնդերից),—Պարոնայք, համեցէք գոյնիը, ամեն ինչ պատրաստ է, այդտեղ մի փոքր նեղուածք է։ (Շարունակէ ուրիշների)։

Նեթանէս.—Գոնորին, անշուշտ այն պարոնը, որի մասին լսած էք գիտնական ազատների, նեղտեղ ծանօթացէք, մինչև այժմ դու գիտէիր սրա ծանօթանալու, այժմ իմացիր խոհանոցը, պարոն Նրուանդ Գիլբաանթենց, մեր ապագայ ամուսնի խմբագիրը (Միւսներին) — Պարոնայք, համեցէք ձեզին։ Պարոն Գիլբաանթենց, նեղտեղ (Թուրն են գնում ամենքը, բացի Գասլիճի գնդերից և պատասխանի ուրիշ գործ լինէր)։

Գոնոր.—Բայց չէ որ դուք ես այսուհետև մեր «օրդանոի» գործ պիտի ունենաք Տասկասւոր մանուկների Տետ։

Գիլբ. (Գոյմ)—Գեղացիս Այս խօսքը արդէն բաւական էր, որ յանչսկանայ։ Այդ, սակ իմ իդէալը, իհարսպատան (Գեսարիչին) Ըհը՛ը, Ներեցէք օրիորդ, ձեր գասպորեիցը ինձ միանգամայն գժպիեցնում է... ըը՛ը գուբ... կրնամբաժկեմ ասել, որ մեծ պասիս կանչ պի ընտանիքին, ուր ձեղ կրմիանի ասք դնել։

Գոնոր.—Ներեցէք եմ, չանդագանց քաղաքավար էք դէպի ինձ։

ուանթեան և հոգեղութեան, և իւրաքանչիւր անգամ այդպիսի ընթերցարան բացուելիս գեղուցանուի կրթական իշխանութեան։

* * *

Կովկասի վարչական, գլխաւորապէս ոստիկանական պաշտօնեաների մէջ շատ արագութեամբ փոփոխութիւններ են կատարվում, բացի դրանից, մի քանի ոստիկանական շրջաններում կատարվում է վերացնութիւն. Իշխան կառավարչապետի հրամանով, ինչպէս յայտնում է «Զէրն. Վեստ.» լրագիրը, Բաթումի ոստիկանական վարչութիւնն այժըմ վերացնում է կառավարչապետի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Նորին Մեծութեան օրսորդապետ իշխան Դ. Մելիքովը, որ ամենայն մանրամասնութեամբ ծանօթանում է Բաթումի ոստիկանութեան գործունէութեան հետ։ Բացի դրանից իշխան Դ. Մելիքովն ընդունել է շատ խնդրատուներ և լսել նրանց բողոքները։

* * *

Խարկովից այս օրերս ուղևորուել են դէպի Կովկաս մի խումբ ռուս ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որոնք ընկերովի ճանապարհորդում են՝ մեր երկրին ծանօթանալու նպատակով։ Ամերիկացի տուրիստները հասնում են մինչև Պետերբուրգ, անգլիացիք գալիս են Կովկաս, Խարկովի վարժուհիք և ուսուցիչները կարողանում են ընկերութիւն կազմել և գալ մեր երկրին ուսումնասիրելու և ծանօթանալու մեր կեանքին, իսկ երբ մեր այսպէս ասուած «ինտելիգենցիայի» անդամներից մի քանի հոգի խմբվում են միասին, նրանց մէջ ծագած առաջին պահանջը և խնդիրն այն է լինում, թէ Վիենայի կամ Օրթաճալայի ո՞ր այգումը քէֆ անեն... Մինչև այսօր չտեսնուեց, որ Կովկասեցի մի քանի ուսուցիչներ, գրագէտներ, ինտելիգենտ անձինք կարողանան, կամ աւելի ճիշտն ասել, կամենան մի խումբ կազմել և նեթէ ոչ Եւրոպա, գէթ մեր երկրը պտտեն իրանց մտաւոր ապրմունքի նեղ հորիզոնը մի փոքր ընդլայնելու նպատակով։

* * *

Այս օրերս հեռագիրը հաղորդել էր մի շատ նշանաւոր նորութիւն. Մի ոմն Իվանով մի հեղուկ է հնարել, որով անմիջապէս շիջեցնում են ամենամեծ հրդեհները։ Այդ լուրին չհաւատալու տեղիք չկայ, որովհետև հեռագիրը հաղորդում էր թէ արդէն հրամայուած է Ղազանի շրջանի շոգենաւային ընկերութեանց ձեռք բերել այդ հեղուկը։ Թէ ինչից է կազմուած այդ նոր շիջուցանող միջոցը, այդ գաղտնիքը յայտնի է միայն իրան Իվանովին, բայց Նիժնի Նովգորոդի լրագրները շատ հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում այդ մասին։ «Վօլգար» թերթը այսպէս է նկարագրում այդ զարմանալի հեղուկի ուժը. «Պօղնովսկի կղզու վրայ դրել էին ահագին երկաթեայ աւազան, որ կարող է բովանդակել 500 փութ նաւթ, այդ աւազանի մէջ լցրին 120 փութ նաւթային մնացորդներ, իսկ աւազանի շուրջը 1/4 սաժէն բարձրութեամբ փայտ դարսեցին, վրան նաւթ լցրին և վառեցին. երբ աւազանի միջի նաւթը սկսեց գրեթէ եռ գալ, նրա մէջ վառած փայտ ձգեցին և նաւթը բռնկեցրին։ Ներկայ եղողների ասելով կրակը հասաւ այնպիսի սաստկութեան որ ոչ մի միջոցով չէր կարելի նրան հանգցնել։ Այդ ժամանակ պ. Իվանով իւր հնարած հեղուկից երկու վեդրօ լցրաւ այդ կրակի վրայ, հրդեհն առաջ սաստիկ բռնկեց և ապա հեղհեղէ սկսեց շիջանել և բոլորովին հանգչեց 8 րոպէի ընթացքում ու աւազանի մէջ դեռ 100 փութ նաւթ մնաց առանց վառուելու։

Ինչպէս հաղորդում են, Իվանովն այդ գիւտն արել է երկար չարչարանքներից յետոյ։ Նա ռուս ազնուական է և Վօլգայի ափերի վրայ մի քիմիական գործարան ունէր, որ զոհ գնաց հրդեհին։ Ահա այդ օրից Իվանով մտածեց հրդեհի դէմ միջոց գտնել և երկար չարչարանքներից յետոյ հասաւ իւր նպատակին։

* * *

Յուլիսի 14-ին, ճանապարհների հաղորդակցութեան նախարար իշխան Խիլկով Թիֆլիզի կայարանում առաւօտեան ժամը 10-ից սկսած ընդունեց բազմաթիւ խնդրատուներ՝ մեծ մասամբ երկաթուղու ծառայողներից և ժամը $11^1/_2$ ին ուղեւորուեց Աղստաֆա կայարանը Թիֆլիզից Կարս շինուող երկաթուղու գիծը զննելու նպատակով։

* * *

Կովկասեան հեծելազօր բանակի գըլխաւոր տեսչի օգնական զօրավար լէյտենանտ Տուտոլմին երէկ, ամսոյս 15-ին ուղեւորուեց Սարըղամիշ, Ղարսի նահանգը։

* * *

Յուլիսի 13-ին Թիֆլիզ ժամանեց Լօնդոնից Պարսից Շահի արտակարգ դեսպան Ամիր-խան Սարդարը, որ ներկայացուցիչ էր գնացած Վիկտորիա թագուհու յօբելեանին։ Պարսիկ իշխանաղն իջաւ Թիֆլիզի Լօնդօն հիւրանոցում։

* * *

Դօրի գաւառի Ցխինվալի գաւառակի բժիշկը յայտնում է, թէ Երթացմինդա գիւղի երկու բնակիչները հիւանդացել են սիբիրախտով։

* * *

Անցեալ տարուան սկզբին Թիֆլիզում կատարուեցին մի քանի սպանութիւններ և սպանութեան փորձեր։ Մի քանի հարուստ հայեր միաժամանակ սպառնալից նամակներ ստացան, որոնցով նամակ գրողները մահ էին սպառնում այդ հայերին, եթէ նրանք դրամ չտան։ Ոստիկանական քննութիւնը պարզեց, որ այդ յանցանքները կատարել է մի խմբակ մի ոմն աղէքսանդրապօլցի Լեւոն Ամինովի առաջնորդութեամբ, որ փախած է տաժանակիր աշխատանքներից։ Ամինովին ձերբակալելուց յետոյ՝ պարզուեց որ նա փախել է Սախալինից 1893 թ., բայց բռնուել է և նրա պատժի ժամանակամիջոցը երկարացրել են 4 տարով, բայց 1894 թուի մայիսին նա կրկին փախել է, հասել Կովկաս և ապրել է գլխաւորապէս Թիֆլիզում և Բագվում։ Այդ երկու քաղաքներում Ամինովը ապրուստի միջոցներ էր ճարում ինքնիրեն անուանելով Ներկայացուցիչ Լօնդոնի յեղափոխական ընկերութեան և կազմակերպեց կանոնաւոր խմբակ, որ սպառնալից նամակներ էր ուղարկում հարուստներին՝ նրանց սարսափեցնելու նպատակով և ապա սկսեց կազմակերպել մի շարք սպանութիւններ։ Թիֆլիզում վաճառական Գէորգովի սպանութիւնից և մի քանի վիրաւորումներից յետոյ, Ամինովը ձերբակալուեց։ Զինուորական նահանգական դատարանի վճռով Ամինովը դատապարտուեց տաժանակիր աշխատանքների 25 տարով և ուղարկուեց Խարկով, այնտեղից Սախալին զրկուելու համար։

Ամինովի փախստեան գործի քննութիւնը նշանակուած էր յուլիսի 11 ին, բայց ինչպէս հաղորդում է «Տիֆլիս. Լիստ.» ը՝ այդ գործի քննութիւնը յետաձգուեց, ինկատի ունենալով, որ Ամինովը ուղարկուած է ի կարգադրութիւն Խարկովի ընդհանուր նահանգապետի։

* * *

Եթէ հաւատանք «Պետ. Լիստ.» թերթին, այժմ պարզվում է որ Բագուի մի քանի նաւթային գործարանների գնողները ոչ թէ անգլիական դրամագլուխ ընկերութիւններն են, այլ Ռօտշիլդն է, որ արդէն մի քանի տարուց ի վեր նաւթային մեծ գործեր ունի Բագւում և այժմ նոր հողեր և գործարաններ է գընում Բագուեցիներից անգլիական ընկերութեանց անունով։

* * *

Յուլիսի 14-ին Քուր գետի ափին, ձորի մէջ գտան մի անծանօթ մարդու դիակ։ Մեռածի հագին կար չէրքէսկա և կրծքին Ս. Գէորգի զինուորական չքանշանը, աջ ձեռը և ձախ ոտը կտրուած էր։ Ոստիկանական քննութիւնից պարզուեց, որ մեռածը Աղեքսանդրապօլցի Կ.-ն է հոգեպէս հիւանդ։ Հանգուցեալի որդին իր հօրը բերել էր Թիֆլիզ բուժելու նպատակով, բայց հիւանդանոցում տեղ չգտնելով վերադարձրել էր երկաթուղու կայարան՝ հայրենիք տանելու համար, իսկ հիւանդը կայարանից աներեւութացել էր և միայն երեկոյեան գտան նրա դիակը ձորում։ Ենթադրում են, որ հոգեպէս հիւանդ Կ.-ն բարձրաւանդակից ձորն է գլորուել և մեռել։

* * *

Կարտալինիայի վրացի աւազակները գործում են յոյն աւազակների սխեմայով։ Կարտալինիայի Դուսեթի գիւղից հաղորդում են «Կավկազին», թէ այդ գիւղի քահանան և գզիրը յուլիսի 3 ին հետեւեալ նամակներն են ստացել աւազակներից։ Քահանային գրում են.—«Տէր Գաբրիէլ, նախապատիւ համբերութեան կեանքդ յաւիտենական կեանքից և մեզ համար մինչև յուլիսի վերջը պատրաստիր հարիւր յիսուն թուման դրամ և քո որդու ձին, թէ չէ մենք ամենքս միասին կ'այցելենք քեզ. . . Եկել ենք քո անտառի ծայրը գիւղական ճանապահապահ ոստիկանի հետ...» Դպրին գրկած տոմսակի մէջ ասուած է —Դպիր Վանօ, ուղարկիր հինգ թուման և քո որդու ձին մինչև յուլիսի վերջը, թէ չէ գլխիդ դժբաղդութիւն կգայ»

Այդ նոյն օրը, տեսել են անտառում զինուած աւազակներին ծառերի վրայ (?) և գիւղում մեծ իրարանցումն է ընկել։ Ամենքը թաքնուել են գիւղում (քաջ են վրացիք) և այդպիսի սարսափի մէջ են անցկացնում օր ու գիշեր։

* * *

Գ. Սեդրաք Մանդինեանը մեզ խընդրում է տպագրել հետեւեալը.

Տպագրութեան համար պատրաստ ունիմ.

1) Ստուերագիծ կանանց հոգեբանութեան,
2) Տրավիլ և Կրեսսիդէ, կատակերգութիւն Շէքսպիրի.
3) Հայերէնի թարգմանելու համառօտ հրահանգ։

Որոնք որ յօժար կլինեին տպագրել այդ աշխատութիւնները, նոցանից խընդրում ենք պայմանների մասին կամ իրանց առաջարկութիւններով դիմել մեզ, հետեւեալ հասցէով. Тифлисъ Сергіевская ул., д. № 15 Սեդրաք Մանդինեան։

* * *

ԴԻԱՐԲԷՔԻՐ 12 Յունիսի 97

—

Ցիրող տնտեսական տագնապի պատճառով, երկու տարիէ ի վեր, տխուր գաղթականութիւնը հոս ալ անպակաս կերպով խաղաց իւր աւերիչ դերը։ Դիարբէքիրցի ժողովուրդը, որ այնքան հակառակ էր գաղթելու գաղափարին, վերջապէս ինքն ալ հետեւեցաւ ուրիշներու ցաւալի օրինակին, թողուց իւր պապենական հողն ու ջուրը, տունն ու տեղը, գնաց օտար երկիր բաղդ որոնելու, գործ գտնելու Այս վերջին երկու տարիներու մէջ կարաւաններ շարունակ, գրեթէ իրարու ետե մեկնած են քաղաքէս, հետերնին տանելով ամեն մի անգամին 30—40 ընտանիքներ, այնպէս որ՝ այսօր քաղաքիս մէջ զգալի պակասութիւն մը կտիրէ։ Այստեղ գաղթողները, գրեթէ ամէնքն ալ, շատ քիչ դիրք ունեցող և գործի տէր մարդիկ եղած են, որոնք մեծ օգուտ ունէին քաղաքիս մէջ ապրող գործաւորներու դասակարգին. շատերը կ'աշխատէին անոնց գործերով և կամ դրամով՝ օրապահիկ մը ճարելու համար իրենց խեղճ զաւակներուն։ Երանի՜ թէ վերջ մը գտնէին այդ տխուր գաղթականութիւնները, որ կարծուածէն շատ աւելի ունին իրանց աւերիչ վնասները Մեր պանդուխտ գաղթականները, օտար երկիրներու մէջ ցաւալի վիճակ մ'ունին, անոնցմէ շատերը արդէն թշուառութեան անձնատուր եղած՝ կըթափառին անգործ, խեղճ և անօթի. շատ քիչերն են, որ յաջողած են գործով մը պարապել հաց մը ճարելու համար, ամէն շաբաթ տխուր լուրեր կըհասնին գաղթականներու վիճակին վրայով, ամէն կողմերէն ու տեղերէն։

Ներկայ ժամանակիս մէջ ուր որ ալ դառնանք աղքատութիւնն իւր սոսկալի երեւոյթով տնկուած է մեր աչքին, շրջապատած է զմեզ։ Թողունք քաղաքացիներ, որ քիչ թէ շատ գործով մը կը պարապին, պատառ մը չորաբեկ հաց կըգտնեն, կէս կուշտ կէս անօթի կ'անցնեն օրերնին։ Այսօր ամէնէն խեղճ և թշուառ վիճակի մէջ գտնուողներն են գիւղացիները, դուրկ ապրուստի ամէն միջոցներէ՝ ձեռք ձեռքի վրայ դրած՝ կը մնան օրերով անօթի, ամիսներով մերկ։ Իրաւ որ մարդասիրական օգնութիւններ կըլլան, նպաստներ կը տրուին այլ և այլ կողմերէ, շատերը կըստանան հացագին մը և կ'ապրին անով շատեր ալ կան, որ առած նպաստնին խիստ աննշան բան մը լինելով՝ կըտեսնեն միակ աչքով, փորով կըմնան նորէն անօթի նորէն կարօտ։ Սակայն շատեր ալ կան, որ կը գտնուին գիւղական մութ և անծանօթ անկիւններու մէջ, հոն հեռի ուղղուած սրտերէ, անտես գթոտ աչքերէ՝ թշուառութեան անգութ ճիրաններէն կաշկանդուած՝ կ'ապրին ամենադառն խեղճութեամբ, ողորմելի ճգնաժամեր կ'անցնեն. Թերեւս անհաւատալի թուի շատերուն և չափազանց, երբ ըսեմ թէ այդպիսի տեղեր գտնուած են և կըգտնուին ընտանիքներ, որ շաբաթը հացի անգամ մը հացի երես տեսած են, այն ալ առանց կշտանալու. ո՞վ գիտէ անգութ թշուառութիւնը այսպէսով քանի՜ զոհեր տարած է մեզմէ։ Այդ մասին, կըխընդրենք գաւառական շրջաններու մէջ նըպաստ բաշխող անձերէն, որ բարեհաճին քիչ մ'աւելի ուշադրութիւն դարձնել իրանց գործին, աչքի առաջ ունենալով անծանօթ անկիւններու մէջ տառապող թշուառութեան արժանի կարօտները, ինչպէս նոթիները։

Այս վերջին երկու տարիներ, անտեսական ընդհանուր տագնապը տիրելէ աղին, չինական ժողովուրդն ալ չարունակ գաղթելու մէջ է, ասոր հետեւանքն ալ շատ ցաւալի է և կարծուածէն աւելի ունի իր տխուր աւերումներն ու քանդումները։ Սակայն ինչ ընեն խեղճերը, երբ չունին կարողութիւն հողը մշակելու, վարուցան ընելու, երբ չունին հաց ուտելու, ճիժճիրներին (զաւակներին) կերակրելու։ Այսպէս ամեն միջոցներէն զրկուած՝ անօթութենէ չմեռնելու համար կըթողուն իրենց սիրելի բնավայրը, հողն ու ջուրը, արտն ու ափը, կ'առնին ճժերնին իրարու ետե խումբ խումբ կըվազեն շարան պարան, կըլեցուին մօտակայ քաղաքը, հոն, պաշխպաներու տակ, ցուրտ ու խոնաւ, ցած ու նեղ աղտոտ, անմաքուր բնակարաններու մէջ կըբնակին, առանց ծածկոցի, առանց փսիաթի կըպառկին թաց գետիններուն վրայ, հիւանդութիւն, որ շատ կ'ախորժի այսպիսի տեղերէ, իր բոյնը հաստատելով այս խեղճերուն մէջ, մէկիկ մէկիկ կըկրզէ իրենցմէ և կըյանձնէ հողին։ Այսպէսով, ինչպէս այսօր, ո՞վ գիտէ թէ քանի՜ զոհեր ունեցաւ Դիարբէքիրի մէջ բնակող գիւղացին։ Իսկ ապրելու համար աւելորդ կը համարիմ ըսել, թէ ո՛րքան դժուարութիւններ կըկրեն այս թշուառները, թէև երբեմն երբեմն կըտրուին նպաստներ, թէ Անգլիական հիւպատոսարանի կողմէ և թէ Հայոց Առաջնորդարանէն շնորհակալ ենք, Առտուած չէն պահէ տուողն ալ, բաշխողն ալ, սակայն աղքատները շատ ըլլալուն՝ տրուած նպաստները խիստ անբաւական են զանոնք կերակրելու։

Ինչպէս ուրիշ տեղեր բացուած են որբանոցներ Ամերիկացի Միսիոնարներու կողմէն, նոյնպէս ալ հոս, քաղաքիս մէջ որբանոց մը բացուելու խօսքը կըդառնայ, և երթալով իրականութեան կըմօտենայ, շնորհակալութիւն յայտնելով յաջողութիւն կը մաղթենք այդ օգտակար ձեռնարկութեան և կըխնդրենք այդ Միսիոնարներէն, որ բարեհաճին փութացնել որբանոցին բացումը. կը յուսանք որ այդ մասին բանակցութիւնը կըլլան Հայոց Առաջնորդարանին հետ։ Հայ որբերուն հարկ եղած խնամքը տալով մէկ տեղ Միսիոնարները պիտի հաճին հոգ տանիլ նաև անոնց տոհմային կրթութեան և սովորութեան։

Երկար ժամանակներէ ի վեր ցորենը խիստ աժան եղած է այս կողմեր և այս մեծ մխիթարութիւն մ'էր. սակայն ցաւ է յայտնել որ, 20 25 օրերէ ի վեր ցորենին գինը սկսած է կամաց կամաց բարձրանալ, որուն համար ամեն մարդ մեծ մտատանջութեան մէջ է։ Ցորենին օլչակը (չափը) առաջ 3-6 ղրուշ էր, իսկ հիմա 6 10 ղրուշ եղած է։

«Մասիս»

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գէորգ Բարխուդարեանցի Բանաստեղծութիւնները. Թիֆլիզ, 1897 թ.

Ամբոխը ամեն մի մարդու վրայ նայում է իւրև մէկին իւր միջից. Նա ամեն մէջ տեսնում է ոչինչ չզանազանուող հոգի և մարմին, օրական ապրուստի հոգսեր, հացի խնդիր, գոյութեան կռիւ... մի խօսքով իւր աչքում նա այն հազարներից մէկն է, որ ծնվում է, կեանքը քաշ է տալիս և վերջին խաչակի է արժանանում... Իրան ինչ փոյթ, թէ ով է Հեկուբէն...

Ահա քառասուն տարի է, որ պ. Գ. Բարխուդարեանցը երբեմն երբեմն յիշեցնել է տալիս իւր մասին, մինչ մի երկու տող արձանագրելով Պարնասի տարեգրութեանց մէջ, որպէս զի դարձեալ մի կաթիլ ցօղ ցօղէ ամբոխի անդաստանում, որ իսկոյն պէտք է ցամաքի։ Ամբոխին ինչ փոյթ, թէ ով է այդ ռամկիչը։ Ասուպէս դորա երբեմնակի երևոյթը գրականութեան ասպարիզում ակամայ յիշեցնում է իւր «Զորս հայրյի» կրկնուածքը.

«Ամէն գիշեր, մէջ գիշերին,
Այն ինչ խորը լռութիւն
Ցած է իջնում, տիրում երկրին,
Եւ ննջում է բնութիւն,—
Արարատի լեռների վրայ
Խորհրդաւոր այդ պահուն,
Բազմած սպիտակ ամպերի վրայ,
Դալիս են չորս Հայկազուն։
Իսկ ամբոխը երբէք չի հարցնում.
«Ովքեր են այդ հսկաները.
Այնտեղ ինչ են կամենում»։—

Այս հարցին դարձեալ ինքը Բարխուդարեանցն է պատասխանում, այժմ հրատարակելով իւր «Բանաստեղծութիւնները»։ Ծայրէ ի ծայր կարդալով այդ ժողովածուն, ակներև յայտնի է դառնում, որ ամբո-

---

ՏԵՍԻԼ 13.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆՈՒՆԷ

Նունէ.—Բարիշնա, աղջիկ պարոնը մէ նմուշ ձիգ է ուզում, (դուրս է գընում)։

Գոհար.—Իսկոյն, ներեցէք պարոն Գիւլբասարեանց, ես անմիջապէս կըվերադառնամ, բայց ինչու չէք գնում դահլիճը, մի՞թէ դուք իրաւունք չունիք մասնակցելու։

Գիւլբ.—Ոչինչ, ոչինչ, ես այստեղ գտայ Սեննեկա և Վօլտեր, ի դէպ ինձ հարկաւոր էր մի կարևոր ցիտատ գըտնել, յուսով եմ, որ թոյլ կըտաք օգտըւել. այնպէս չէ։

Գոհար.—Խնդրեմ։ (Դուրս գնալով) Իսկոյն։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ 14.

(ՄԻՐԶՈՒԱՆ) ԳԻՒԼԲԱՍԱՐԵԱՆՑ (մենակ)

Եվրիկա, այս է, այս, վաղուց փափագած կինս։ Ո՛չ, սա կին չէ, այլ երկնային արարած. ո՜, գեղեցկութիւն խնկքի, համաչափութիւն պատկերի, ճիշտ ճաշակիս կատարեալ ամփոփումն։ Քայլուածքը ինձ յիշեցնում է Հելլեսեան այծեամնիկը, նոյն իսկ Ոսկիամայր Անահիտն է աչքիս առաջև։ Ահ՜ նրաղ մտ տեսած Ալանաց գեղաչեայ օրիորդը։ Այլ ես հարկաւոր չէ օժիտի մասին խօսք բանալ, քանի որ օրիորդը ինքն արդէն միանգամայն դրամագլուխ է, իսկ և իսկ գոհարը։ (Մտածելով) ուրեմն ինձ ինչ է մնում՝ գործադրել բոլոր պերճախօսութիւնս, յափշտակել նրա սիրտն ու հոգին, այո, հմայել և յանկարծ ձգել իմ բոցավառ գիրկը։ Դժուարին է երեւակայել որ օրիորդ Գոհարիկը մերժէ առաջարկութիւնս։ Ուրեմն, նախ և առաջ յարձակումն սկսենք ծանօթացնելով մեր անձը։ Այո, օրիորդը պէտք է վերջնականապէս համոզուի իմ բարձր կրթութեան մէջ և այդ, ըստ իմ կարծեաց, շատ դիւրին է. Ի դէպ՝ դիպլոմը ինձ մօտ է. ես կըձգեմ ահա այն ձեռագործի մօտ, իբրև թէ անզգուշաբար. Նա առանց այլեւայլութեան կընկատէ և այնքանը ինձ բաւական է, յետոյ կըյայտնեմ գոկումենտիս կորստի մասին։ (Հանում է դիպլոմը և ձգում է ձեռագործի վրայ, նստում է և իբր թէ գիրք է կարդում)։

ՏԵՍԻԼ 15.

ԳԻՒԼԲԱՍԱՐԵԱՆՑ և ԳՈՀԱՐԻԿ

Գոհարիկ.—Ներեցէք անքաղաքավարութեանս, դուք երևի ձանձրացաք, ինչու չէք ուզում մտնել դահլիճը. (կանչելով) Ներսէս, Ներսէս։ (դրսից ձայն—«Ինչ ես կամենում») Դու այնքան յափշտակուել ես այդ քո ընտրողական պայքարով, որ միանգամայն անվայելուչ բան ես բըռնում։ Մի՞թէ կարելի է մոռանալ մեր հիւրին։

Ներսէս. (մտնելով)—Օ՜, ներիր խնդրեմ, միանգամայն մոռացայ, համեցէք, համեցէք աղաչում եմ, մենք ձեզանից ծածուկ ոչինչ չունինք. ընդհակառակը դուք մեր թեկնածուն էք։ (Գոհարիկին) Գոհարիկ, դու ինչու չես գալիս, չէ՞ որ մեզ պէտք է ամբակեծելիր։ Թո՛ղ պարոն Գիւլբասարեանցը ձեր թեկնածուն լինի, փոյթ չէ։

Գոհար.—Համեցէք և ես գալիս եմ։ Պարոն Գիւլբասարեանց, խնդրեմ, ձեր թեւը (Թեւ թեւի տուած գնում են դէպի դահլիճը։)

ՏԵՍԻԼ 16.

ՆՈՒՆԷ, (մենակ)

Նունէ. (մտնում է ձեռքին մի սկուտեղ, վրան պասուղ և քաղցրաւենիքի վազաներ, պահարանից հանում է բանկաներ և լցնում վազերում. իսկ մէկի երեսի թուղթը որ արդէն փտած և քայքայուած է, դէն է շպրտում և վերջը երկար որոնելուց յետոյ գտնում է դիպլոմը, որով և փաթաթում է երեսը)։

—Վայ աստու, չեմ հասկանում թէ աղէն ինչ է ուզում. «Աւելորդ բանիր չի կոտէ ու ինքն էր աւելորդ բանիրը մաղմնում։ Ինչլի հիմի մէ չայն էլ հերիք է կոտէ, հիմի կի միրք էլ է հարկաւոր ու մուրաբէք էլ։ Տեսէք թէ ինչ մինձ բան է. ուզում է դոնաղներուն շանց տայ վուր ինքն իր ձեռքավ շինիտեա կի չիմ կանայ քաղի, գուղիս ամարողինա, գուղիս կըռուժովնիկ։ Ասա մէ փիքր է անում վուր ամէն մէ գրվանքէն մէ թուման է նստի ինչ էւ իր ձեռքավ է շինի միթամ. (երեսի ճղած թուղթը ձգելով վառարանը)։ Հ'ը, տես, հիմի ես ինչով փաթաթեմ սրա էրէսը, վախիցը չիմ կանացի էն ստոլին մի մօտենայ, կրակ կըւ կտրուի։ Շատ էլ աշկարա գեղիմ վուր էն գաղէթ է, ինչ զահրումար է, աւելորդ թղթեր են, ամա քանի վուր ստոլի վրայ է դրած, ձեռ տալը չի ըլի։ (Տեսնելով դիպլոմը), ահ, էս ինչ լաւ թուղթ է, կուլի աֆիշկայ է, ինչքան էլ հաստ է. սրանով հօ բոլոր քիլէքն էլ կըւ փաթթուի։ (Հոտոտում է) թազա սապնի թուղթ է, էլի, իժում ինչ լաւ էլ հոտ ունէ քա... (փաթաթում է և կրկին գընում պահարանում)

Ներսէս. (դրսից զանգահարում է և կանչում)—(Թազուհի) Նունէ.

Նունէ.—Էս սահաթիս, գալիս եմ, հորէս բերում եմ, բերում։

ՏԵՍԻԼ 17.

ՆՈՒՆԷ և ԳՈՀԱՐԻԿ

Գոհարիկ.—Ինչ եղար, աղջի, քեզանից մի զգալ բան ուզեցին, դու ահագին բան դարձրիր, տո՛ւր էլի, ինչու գիտես այդպէս զանդաղ շարժուել, մի քիչ աչքբաց եղիր, (Նինօն դուրս է գընում դէպի դահլիճը)։ Հա, հա, հա... ինչպէս տեսնում եմ ապագայ խմբագիրը ինձանից ձեռք չէ քաշելու. Նորա խօսակցութիւնը միանգամայն տարօրինակ է թվում։ Չեմ հասկանում թէ ինչու այդքան մեծ համարմունք ունի իւր վրան, իսկ շարունակ գործադրող «Դիպլոմը» արդէն ձանձրութեան գագաթնակէտը հասցրեց։ Արդեօք սնապարծութիւնի՞ցն է, թէ կամենում է իւր վարկը բարձրացնել։ Այո, նա կարծեմ անտարբեր չէ դէպի ինձ, նորա կցկտուր խօսակցութիւնը, մինչև ականջները յանկարծակի կարմրելը ապացոյց է, որ միտք ունի առաջարկութիւն անելու. բայց չէ համարձակվում։ Պէտք է մի փոքր չփաթեցնել, ուստի առժամանակ քաջալերենք, տեսնենք ինչպէս ինչն է նորան այդքան յուզողը։ (Մտնում է Գիւլբասարեանցը)։

ՏԵՍԻԼ 18.

ԳՈՀԱՐԻԿ ԵՒ ԳԻՒԼԲԱՍԱՐԵԱՆՑ

Գիւլբ.—Ա՛հ, դուք այստե՞ղ էք։

Գոհարիկ (իբր վախեցած)—Օ՜հ, որքա՜ն վախեցրիք։

Գիւլբ.—Ներեցէք, ներեցէք, օրիորդ, մեղաւոր եմ։

Գոհարիկ.—Է՛հ, ինչ արած, բայց չէ՞ որ դուք ցանկութիւն չունէիք ինձ վախեցնելու, ինչև է, բայց ինչո՞ւ թողիք ժողովը։

Գիւլբ.—Եթէ ես հեռացայ այդ խկապէս նորա համար էր, որ իմ ներկայութեամբ ճնշում չգործեմ նոցա ժողովին, և քանի որ մտադիր են ոմանք ինձ թեկնածու առաջարկել, իմ ներկայութիւնը մի փոքր անվայել է, թոյլ կը տար առժամանակ զբաղուել։

Գոհարիկ.—Համեցէք, ես ձեզ չեմ թողնել որ տխրէք, խօսեցէք. պատրաստ եմ ամենայն յափշտակութեամբ լսել ձեզ։ Մի փոքր առաջ դուք ինչ որ ուզում էիք հարցնել, բայց մեզ խանգարեցին, արդեօք չէք յիշում։

Գիւլբ.—Այո, ես, եթէ չեմ սխալվում, ուզում էի համարձակուել յայտնել ձեզ, որ ձեր առողջ դատողութիւնը և թէ այն համակրանքը՝ որ տածում էք դէպի իմ ապագայ օրգանը, կատարելապէս ապացուցանում են մեր բնաւորութիւնների միանմանութիւնը։ Ես նորից կրկնում եմ, որ դուք մեծ պատիւ կանէք այն ընտանիքին, ուր ձեզ կըվիճակուի ոտք դնել։

Գոհարիկ. (իբր ամօթխած)—Այսինքն.. դուք մի փոքր պարզ չէք խօսում, եղէք անկեղծ, տեսնում էք ես չեմ քաշվում։

Գիւլբ.—Քանի որ անկեղծութիւն էք պահանջում, ուրեմն ես կըխօսեմ աւելի հասկանալի լեզուով, իմ ապագայ դիրքը, այն մեծ պարտականութիւնը, որ ես յանձն եմ առնում իմ ազգութեան առաջ, բաւականին մեծ է և սրբազան. ուստի բարոյական տեսակէտից և նոյն իսկ այդ ազգի պահանջմամբ ես պարտաւոր եմ ամուսնական սրբութիւնը պահպանել։ Այժմ հարց է ծնվում թէ ինչպէս է պահպանվում այդ սրբութիւնը, եթէ ոչ

խում չնշմարուած մարդը մի մարգարէ է եղել անապատում, որ երգել է գինի և սէր, երբ որ ամբոխի հետ զուարճանալու հաւէս է ունեցել, որ միշտ խրատել, բաջալերել և խրախուսել է, երբ որ նորան վհատած է տեսել, որ միշտ բարութիւն, գեղեցկութիւն և արդարութիւն է քարոզել, երբ որ նորան խոտորուած է գտել, միշտ տպաւորելով, թէ

«Դժբախտ է այն աէրութիւնը,
Որի թշնամիք մէջն են»,—

—որ ամբոխի հետ ի միասին «միշտ հրճուացել և հառաչել» է, որ ամբոխի կենդանութեան ոչ մի բաբախումը առանց արձագանքի չի մնացել իւր սրտում, այնպէս որ եթէ, զոր օրինակ, պապակած բացագանչել է՝

«Տրնեկ մէկն ինձ տար պատասխան»,

Սարի արձագանքը նորան պատասխանել է.

—«Ա՛ռ պատասխան».

Իսկ երբ որ պաղատել է, թէ

«Մէկ հարցմունքիս լաւ ուշ դարձրու»,
Արձագանքը կիսատ կրկնել է՝
—«(Հ)արցրու».

Եւ երբ որ վերջապէս հարցրել է՝

«Ինչ է սպասում խեղճ հայ ազգին,
Միթէ կորուստ, ո՞չ փրկութիւն»,
Արձագանքը որոտել է.
—«Փրկութիւն».

Բայց լրագրական սուղ տարածութիւնը չի ներում, որ մենք երկարենք։ Թող ընթերցողը մի քանի կոպէկ չխնայէ, գիրքը գնէ և կարդայ։ Հիմա կարդալու օրեր են.

Այսպէս, եղբարք, մեր կեանքումը
Ձատ կըտեսնենք մրրիկներ.
Չվհատենք, մրրիկներին
Կըհետևեն պարզ օրեր։

Որովհետև հեղինակը հոգով դեռ արի է, և յոյս ունենք, թէ նա դեռ դարձեալ շատ տարիներ կ'ընծայէ մեզ իւր փնջիկից ծաղիկներ, մենք առաւելապէս ուզում ենք այն թերութիւնները մատնացոյց անել, որոնք որ թուլացնում են ծաղիկների գեղեցկութիւնն ու անուշաբուրութիւնը։

Պ. Բարխուդարեանցը թէ ինքնուրոյն և թէ թարգմանական բանաստեղծութիւններ է մեզ ընծայել։ Բայց նորա ոյժը աւելի թարգմանութիւններումն է երևում, քան ինքնուրոյն գրուածքներում։ Մենք չենք ուզում ասել, թէ նորա ինքնուրոյն ստեղծագործութեանց մէջ նշանաւոր հատուածներ չկան։ Զոր օրինակ վերը յիշատակած «Զարս հսկայ» և «Արձագանք» այնպիսի գոհարներ են, որ ամենայն գրականութեան պատիւ կըբերէին. բայց արդեօք շատ են այդպիսի գոհարներ։—Ինքնուրոյն ոտանաւորներում բանաստեղծական գիւտը շատ անգամ խիստ աղքատ է, այնպէս որ մէջը աւելի բառ՝ քան աւելին կայ։ «Իմ ոգևորութիւնը» նկարագրում է բանաստեղծի անհուն սէրը դէպի Հեղինէն. այս է 8 տուն կամ 32 տողի բոլոր բովանդակութիւնը, որ Պլէօֆին ընդամենը 4 տողով՝ այսինքն 8 անգամ կարճ և հատու է արտայայտում, և որ մեր հեղինակը այսպէս է թարգմանում.

Եթէ ձգէի սիրտս դէպի վեր
Երկնակամարը,
Արեգակի տեղ նա կըտաքացնէր
Ամբողջ աշխարհը։

Մեր հեղինակը շատ անգամ մեղանչում է բանաստեղծութեան դէմ և արձակ գրութեան նիւթը՝ ոտանաւորով է ձգտում։ Զոր օրինակ «Մերատ Զահաղիզեանին» հատուածը՝ մի պատուական նամակ է, բայց հէնց այդ պատճառով շատ ցուրտ բանաստեղծութիւն է։ Մի յոբելեարին 4 տող ձօնելով, մեր հեղինակը միայն այս միտքն է յայտնում, թէ յոբելեարը հայ մանուկների կրթութեան գործին ծառայել է 25 տարի։ Միթէ բանաստեղծութիւն է այս միտքը։ Մենք ճանաչում ենք մի ուսուցչի, որի 7-դ դասարանի աշակերտը այս բովէս այնքան գծը կապելու շնորհ է ցոյց տալիս, որ մեր ընթերցող գրքի ճակատը այսպէս կարդաց. «Գէօրգ Բարխուդարով—եանցի բան աստ եղծութիւն-ները, Թիֆլիս, տիսնաշա վասնմասո գետ նոստո սեգմոյ գոդ»։ Յոյս ունինք, թէ այսպէս կարդալ սովորեցնող մի ուսուցչի համար, որ ոչ թէ 25՝ այլ աւելի ևս երկար է վարել իւր պաշտօնը, մեր բանաստեղծի բնարը երբէք չի հնչի։ Մենք էլ հէնց այդ էինք ուզում ցոյց տալ, թէ վիճակագրական թիւը (25 տարի) բանաստեղծութեան նիւթ չի կարող լինել։

Այսպէս էլ մեր հեղինակը կամ լաւ չի ամբողջացնում, անգլուխ և անվերջ է թողնում, սիրուն յղացած բանաստեղծութիւնը («Կոյր երգիչ», «Մարդ և հրեշտ» այլն), կամ երևակայութեան ծայրագոյնութեան ժամանակ՝ յանկարծ մէջը սպրդեցնում է մի մի տող յաւելուած, զանազան բարենպատակ խոհականութիւններով։ Զոր օր. «Ափսոս աշխատանքս»-ը մի գանգատ է, որ ամենայն մարդի մշակ բնականաբար աղաղակում է, որպէս արիւնով լցուած սրտի փղձուկ, երբ որ կարմիր թանաքը նրա աշխատութեան վրայ խաչ է գծում, որպէսզի նրա գոյութեան տխուր վերջ տրուի։ Այստեղ բացի ամպրոպային անէծք կարդալուց՝ ինչ ունի անելու վիրաւորուած զգացմունքը. բայց ո՛չ, մեր հեղինակը աւելի սառնարիւն է, որովհետև բարենպատակ խոհեմութեամբ գրել լու վարժուած է.

Բայց մի անգամ էլ ցոյց տուեց փորձը,
Ոչ ամեն գրուածք բարենպատակ
Կարող է ընկնել միշտ մամուլի տակ։

Մեզ այնպէս է թւում, թէ նպատակի բարութիւնը լաւ նիւթ կարող է լինել մի փաստաբանական ճառի, մի լրագրական առաջնորդողի, կամ մի փիլիսոփայական գրուածքի համար, բայց բանաստեղծութեան մէջ դա լոկ միայն մի սառը ջուր է։ Երբ որ խելք-դէր զգացման տեղ է բռնում, այնտեղ բանաստեղծութիւնը ամուլ է մնում. բանաստեղծութեան մէջ զգացմունքը հարկաւ պէտք է խելքով պայծառանայ, բայց ոչ թէ տեղի տայ նրան։

Վերջապէս մեր հեղինակը բազմազանութիւն չի սիրում և շուտ շուտ է կրկնվում, նա եթէ մի բարեկամին ընծայէ իւր գիրքը, կ'ասի.

Բարեկամ, սրանով եղիր բաւական.
Գիտես, որ չունիմ այլ գանձ թանկագին։

Իսկ եթէ սիրուհուն ընծայէ, այն ժամանակ էլ կ'ասի.

Առ ա՛ռ այս տետրը ընծայ,
Պաշտելի էակ.
Ճշմարիտ է, թանկ բան չէ սա.
Բայց գանձ է միակ։

Այսքանը բաւական լինի ինքնուրոյն գրուածքների մասին։—Գալով թարգմանութիւններին, պէտք է յիշեցնել, որ պ. Բարխուդարեանցը իւր կեանքում շատ է թարգմանել. հէնց միայն Շիլլերի ողբերգութիւնների թարգմանութիւնը՝ որքա՜ն աշխատութիւն պիտի պահանջէր նրանից։ Իսկ եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, թէ թարգմանիչն միշտ աշխատել է՝ ստրկութեան չափ հաւատարիմ մնալ բնագրին, այն դէպքում, հասկանալի է, թէ նրա լեզուն և ոտանաւորների շէնքը, ժամանակի հետ գնալով, ինչ ազդեցութիւններ պիտի կրէին։

Սակայն քանի որ խօսքը բանաստեղծի «լեզուի» և «ոտանաւորի շէնքի» մասին է, չպէտք է մոռանալ մի նշանաւոր հանգամանք ևս, որ կարող է ամենին յայտնի չլինել։ Ով որ պ. Բարխուդարեանցի բանաստեղծութիւնը կարդացել է միայն ինքը անձամբ և չի լսել նոյն իսկ բանաստեղծի արտասանութեամբ, նա այդ բանաստեղծութեան քաղցրութեան կէսը չի վայելել։ Պ. Բարխուդարեանցը խիստ նշանաւոր ընթերցող լինելով՝ գիտէ իւր ունկնդիրների վրայ խոր տպաւորութիւն գործել։ Նա իւր ստեղծագործութիւնները անգիր սերտած ունի և գիտէ, թէ կենդանութեան ջիղը որ բառերում կամ կապակցութիւններումն են թաքուցած, ուստի և իւր կենդանի արտասանութեան ժամանակ՝ այն աստիճան իշխում է բովանդակութեան ճոխութիւններին, որ եթէ լեզուի կամ շէնքի թերութիւններ պատահին, դրանք նրա հանճարեղ կենդանի ձայնի երանգաւորութիւնների տակ աննշմար են մնում լսողի համար,—իսկ մենք կարծում ենք, թէ նաև նոյն իսկ թարգմանչի համար, որ շատ անգամ զարմանալի կերպով տպագրութեան է յանձնում թերակատար տողերը, երբ որ տարիներ առաջ մեր սակաւաթիւ լաւ գրողներից մէկն է եղել և այնպիսի օրինակներ է տուել, ինչպէս որ «Զարս հսկան» է։ Ընթերցողից խնդրում ենք, որ նորից կարդայ վերև բերած այդ հատուածի կտորը. այնտեղ 8 ամբողջ տող մի նախադասութիւն են կազմում, ուր ամենայն բառ ընտրած է և իւր տեղումն է, բառերը երաժշտական արուեստով են դասաւորուած, վսեմ իմաստները սիրուն կերպով են յաջորդած, այնպէս որ ընթերցողը մինչև վերջը չի սայթաքում, ոչ մի խոչ և խութի չի պատահում, և մինչև աւարտումը ջրի պէս կարդում է առանց յոգնելու, հետզհետէ աւելի և աւելի վայելելով ամբողջութեան քաղցրութիւնը. իսկ ազդեցութիւնը լիակատար լինելով, բնաւ կարիք չի զգացվում, որ ընթերցանութիւնը նորոգուի։ «Զարս հսկան» բանաստեղծի առաջին երախայրիքն է. հիմա դրա դէմ կարդացէք աւելի նոր բաղոյն թարգմանութիւնը, զոր օր. Լերմոնտովի «Վէճ» կամ Շիլլերի «Իդէալներ», որոնք բնագրով չճանաչելու չափ՝ տկար են փոխադրած։ Մանաւանդ «Իդէալներ»-ը քանի անգամ կրկնուած պէտք է կարդալ, մինչև որ ամբողջութեան կապը փոքր ինչ հասկանալի դառնայ։ Տեղը չի ներում, որ վերլուծութեան ենթարկենք ամբողջութիւնը, որպէս զի խակական տկարութիւնը մերկանայ, ուստի միայն մի երկու հատուածներ առաջ կըբերենք, որպէս զի գէթ հեռաւոր կերպով երևայ թարգմանչի երբեմնակի ձախ ձեռքով աշխատութիւնը։

Պ. Թարգմանիչը շատ անգամ մի չնչին յանգի համար զոհում է իմաստի յստակութիւնը։

Խարամանկ են մարդիկ, թ'և շատ
Ծանր առջի եղբ։

Ինչ է նշանակում «առջի եղբը». դուք չկարծէք, թէ տպագրական սխալ է և խօսքը առջ գազանի մասին է, ո՛չ, նա գեղչուած է և պէտք է կարդացուի «առաջին եղբը»։ Իսկ սա էլ այս դէպքում մի երևելի իմաստ չի ստանում, բայց որովհետև թարգմանիչը պատրաստվում է գրել «Արևելքը», սրա համար էլ վաղօրօք յանգ է հնարել «առջի եղբը»։—Էլ չենք ասում, թէ որքան ճահաւոր է «շատ ծանր» անանջատելի բառերը բաժանել և «շատ»-ը գրել մի տողի ծայրում, իսկ «ծանր»-ը միւս տողի գլխում։—Կարդացէք հետևեալը.

Մարգարտացայտ շատրուանի
Կողքին նիրհելով,
Նստած է տէրը Թեհրանի
Կալեան ծխելով։

Մենք կարծում ենք, որ «նիրհելով նստել» անհնարին բան է, այլ թերևս հնարաւոր լինի «նստած նիրհել». բացի սրանից, ով որ «նիրհում է», նա այլևս «կալեան ծխել» չի կարողանայ. պարզ է, որ այդ չորս տողերը խիստ շփոթ կերպով են նկարագրում դէպքը։

Ի վերջոյ յիշեցնում ենք, թէ գրքի վարդերի մասին չխօսեցինք, մենք ցոյց տուինք միայն մի քանի չանկռող փշեր, ամենևին տարակոյս չունենալով, թէ ով որ Շիլլերի «Զանգը» է թարգմանել, նա կարող էր նոյնչափ գեղեցիկ թարգմանել նաև «Իդէալներ»-ը բայց շտապել է։

Ս. Մանիղնեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XI-ՐԴ ԺՈՂՈՎԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Յայտնի է արդէն որ առաջիկայ օգոստոսի 24-ից մինչև 31-ը Փարիզում պիտի տեղի ունենայ արևելագէտների XI րդ միջազգային ժողովը։ Այդ ժողովի առթիւ հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում Փարիզի «Ասիական ընկերութեան» օրգան „Journal Asiatique"-ը։—Փարիզի ժողովը պիտի գտնուի ֆրանսիական հանրապետութեան նախագահի հովանաւորութեան տակ, նրա պատուաւոր նախագահների թւում անուանում են Շվեդական թագաւոր Օսկարին և Ուէլսի դքսին, պատուաւոր հիւրեր են հրաւիրուած—ժողովրդական կրթութեան և գեղարուեստի նախարարները, Ալժիրի և Հնդկա-Չինաստանի ընդհանուր նահանգապետները, Փարիզի պարսկական դեսպան Նազար-աղան և ուրիշ շատերը։ Comité de patronage-ի (խնամակալ կոմիտետ) անդամներն են Օմալի և Ռօլանդ Բոնապարտ դքսերը։ Ժողովի յաջողութիւնը երաշխաւորելու նպատակով իւր ժամանակին Եւրոպայում և Ամերիկայում արդէն կազմուել են Comités de propagande և այդ նոյն նպատակով Փարիզում գոյութիւն ունի ժողովի մշտական յանձնաժողովը, որի նախագահն է Ecole des langues orientales vivantes-ի (Արևելեան կենդանի լեզուների դպրոցի) վերատեսուչ պ. Շարլ-Շէֆէր, նրա օգնականը, քարտուղարները այլն։

Առաջիկայ ժողովը, նախընթացների նման պիտի ունենայ հետևեալ բաժինները.

I.—Արիական երկրների (Հնդկաստան, Իրան) լեզուները և հնագիտութիւնը։

II.—Ծայրագոյն Արևելքի լեզուները և հնագիտութիւնը,

III.—Մահմեդական աշխարհի լեզուները և հնագիտութիւնը,

IV.—Սեմիտական ազգերի լեզուները և հնագիտ. Ասորիք,

V.—Եգիպտական և աֆրիկական լեզուները,

VI.—Յունաստան, Յունաստանի յարաբերութիւնները Արևելքի հետ։ Բիւզանդիա։

VII.—Արևելքի ցեղագրութիւնը։

Անդամական վճարն է 20 ֆրանք (7 ռ. 50 կ.)։ Ֆրանսիական երկաթուղիները ժողովի անդամներին 50% զիջումն են անում սահմանուած ճանապարհածախսից։

Ժողովի գանձապահ է նշանակուած պ. Ernest Leroux, Paris, rue Bonoparte, 28.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԷՆԶԷԼԻ, 5 յուլիսի

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ժանտախտի դէմ միջոցներ ձեռք առնելու համար Ռուսաստանից ուղարկուած բժիշկների ու գթութեան քոյրերի մի խումբն էլ այստեղ է գործում։ Այստեղի խումբը կազմուած է վեց հոգուց—մի բժիշկ, մի ուսանող բժիշկ, մի կին բժիշկ, երկու գթութեան քոյրեր և մի ֆէլդշէր, կայ և մի բարակ (баракъ). շուտով կըստացուի և երկրորդը։ Թէև դեռ ևս ոչ մի լուր չկայ Պարսկաստանում ժանտախտ տարածուելու մասին, այնուամենայնիւ խումբը եռանդով գործում է, բժշկելով ժողովրդի մէջ տարածուած զանազան հիւանդութիւնները։ Առայժմ բարակը ծառայում է իբրև դեղարան և հիւանդների ընդունարան։ Բոլոր հիւանդներն, առանց բացառութեան, ընդունվում են ձրի և դեղերն էլ տրվում են ձրի, իսկ ծանր հիւանդներին բժիշկներն այցելում են տներում։

Սկզբում տգէտ ու ոչխարամիտ պարսիկները շատ զարմանում ու անհաւատարմութեամբ էին վերաբերվում դէպի խումբը, որ ձրի հիւանդներ է ընդունում և դեղեր է տալիս, մանաւանդ որ դրանց մոլլաներն ու աղաները զանազան տեսակ բացատրութիւններ տալով խմբի բարերարութեան մասին, խրատում էին հասարակ դասակարգին չգնալ ռուս բժիշկների մօտ։ Դրանք բաւական չէին, միւս կողմից էլ իրանց «հաքիմները» էին գրգռում գաճճիկ ժողովրդին հաւատ չընծայել բժիշկներին ու չգնալ նրանց մօտ, խեղճ «հաքիմների» համար բժիշկները մի տեսակ պատուհաս են դարձել, որոնց պատճառով զրկվում են եկամուտից։ Ես չեմ կարող չյիշել այստեղ այն ծիծաղելի միջոցներից մէկը, որով ուզեցել են արգելք լինել խեղճ ժողովրդին բժիշկների օգնութեանը դիմել։ Ստատիստիկայի համար գրվում է այցելուների ինչ հիւանդութիւնը ունենալը, անունները և ազգանունները, տարիքն ու քաղաքացի կամ գիւղացի լինելը. սրանից առիթ առնելով՝ լուր են տարածել, թէ այդ ռուս բժիշկները անունները գրում, ցուցակ են կազմում, որ յետոյ ներկայացնեն Մուզաֆար-էդդին շահին և բժշկելու ու դեղերի փողն առնեն։ Միամիտ պարսիկները մասամբ հաւատացել են այդ լուրին և այնուհետև բժշկի մօտ գալուս ոմանք ծածկում էին իրանց իսկական անունն ու ազգանունը։

Մոլլաների, աղաների ու հաքիմների խրատները միայն առժամանակ ազդեցութիւն ունեցան ժողովրդի վրայ և սկզբում շատ քիչ հիւանդներ էին դիմում բժիշկներին և այն էլ վախվխելով և հազար ու մի կասկածներով, բայց հետզհետէ ընդելացան ու այնուհետև սկսեցին վստահութեամբ և հաւատով դիմել։ Մի քանի ծանր հիւանդների բժշկուելն աւելի ևս նպաստեց դէպի բը-

---

եկեղեցական ամուսնութեամբ. և ուրեմն ես ուզում եմ ասել թէ մտադիր եմ այդ քայլն անել և եթէ մինչև այսօր ուշացնում էի, այդ միայն ընտրութեան դասողութեանս մէջն էր կայանում։

Գոհարիկ.—Այսինքն։

Գիլբ.—Այն՝ որ ես չէի կարողանում գտնել ինձ համապատասխանող զոյգ։

Գոհարիկ.—Իսկ այժմ գտել էք։

Գիլբ.—Ձեր շնորհիւ կարող եմ գտնել։

Գոհարիկ.(ամօթով)—Ինչպէս։

Գիլբ.—Եթէ ձեզ վիրաւորած չեմ լինի. առաջարկում եմ իմ ձեռքը.

Գոհարիկ.—Բայց ․․

Գիլբ.—Առանց բայցի... ես միանգամայն յափշտակուած եմ, առաջին հանդիպումից արդէն սիրահարուած. իսկ դուք, քնքոյշիկ կոյս, կազմում էք ձեռքիս կէսը։ Կարկառեցէք ձեր դիւթական ձեռքը և ասացէք «Այո՛, համաձայն եմ», և ես այս օրուանից ինձ կըզգամ իբրև մի տիրապետող իշխան. նոյն իսկ մի ինքնակալ սուլթան։ Օրիորդ Գոհարիկ, ուրեմն համաձայն էք իմ ամուսինը լինել։

Գոհարիկ.—Բայց նախքան համաձայնելը, պարոն Գիլբասարեանց, լսեցէք ինձ պարզ և լուրջ պատասխանեցէք։ Եթէ այսօր ես կամ դուք խօսք տանք իրար և յետոյ մի ժամից, մի շաբաթից կամ նոյն իսկ մի ամսից յետոյ դրժենք մեր խօսքը — արդեօք այդ պատուաւոր մարդու արժէք կըլինի։

Գիլբ.—Օ՜, ինչ էք ասում, պատուարժան օրիորդ, ձեր ակնարկութիւնը կատարելապէս վիրաւորական է. միթէ ես կարող եմ երևակայել այն ինչոր դուք ենթադրում էք։ Սխալ էք, օրիորդ, այո, սխալ էք։ Այդպիսի անձը հրէշ է, անպատիւ, խօստանալ և դրժել, կընշանակէ ճիւաղային գործ տեսնել։

Գոհարիկ.—Ուրեմն. ես չեմ կամենում ոչ անպատիւ, ոչ հրէշ և ոչ ճիւաղ լինել։

Գիլբ.—Ինչպէս

Գոհարիկ.—Որովհետև... որովհետև ես արդէն... նշանուած եմ։

Գիլբ. (միանգամից յաղթահարուած)—Նշանուա՛ծ, և ո՞ւմ հետ։

Գոհարիկ.—Պարոն Եփրատեանի հետ։

Գիլբ.—Եփրատեանի... իմ անզուլ հակառակորդիս հետ... ա՜, խորտակուեց բաղդիս անիւը... (լռութիւն)։ Ներեցէք օրիորդ, արդէն դժուարանում եմ խօսել ձեզ հետ... իմ շնչառութիւնը ընդհատվում է, թոյլ տուէք հեռանալ, կորչել վերջնականապէս այս բնակարանից։ Տըւէք, տուէք իմ դիպլոմը և ես երթամ ընդ միշտ։

Գոհարիկ. —Ես ձեզ դժուարանում եմ հասկանալ, ինչ դիպլոմի մասին էք խօսում։

Գիլբ.—Ախ. յիմարացայ... արդէն ես ինձ սկսում եմ կորցնել... ո՛չ, ո՛չ... այսինքն ուզում եմ ասել որ... (գնում է դէպի ձեռագործը) ո՞ւր է, ո՞ւր... բայց չէ՞ որ ես այստեղ թողեցի...

Գոհարիկ.—Պարոն Գիլբասարեանց։

Գիլբ.—Ահ, կատակի ժամանակ չէ, վերադարձրէք, խնդրում եմ, այո՛ դուք սկսում էք ինձ ծաղրել, կատակել...

Գոհարիկ.—Խօսեցէք պարզ և հասկանալի, միթէ կարելի է այդքան շփոթուել. գուցէ ձեզ վատ էք զգում, ես անմիջապէս բժշկի յետևից կուղարկեմ։ (Դէպի դահլիճը) Ներսէս, եկ այստեղ, շուտ կանչիր պարոն Մալխազեանին։ Պարոն Երուանդը իրան վատ է զգում, օգնեցէք, շուտ, օգնութիւն։

ՏԵՍԻԼ 19.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԵՐՍԷՍ, ՍԻՄԷՈՆ, ԶԱՔԱՐ ԵՒ ՄԱԿԱՐ

Ամէնքը (ներս վազելով)—Ի՞նչ է, ինչ պատահեց։

Գիլբ.—Այսինքն իմ դոկումենտս, ոչինչ, ոչինչ, այստեղ... այ, ձեռագործի մօտ, ես շտապում եմ, իսկ անհրաժեշտ է որ ձեռքիս լինի.

Սիմէօն.—Հանգստացէք, հանգստացէք, երկիւղ մի՛ք կրել, լաւ կըլինէք. նստեցէք մի փոքր, (երակն է [illegible])

Գիլբ.—Կարիք չկայ, չէ, ես շտապում եմ.. (թափահարելով թևը) Թողէք խնդրեմ, այդ արդէն յիմարութիւն է, դուք չափը անցուցիք, միթէ հասկանալի չէ երբ ձեզ ասում են դոկումենտ։

Ներսէս.—Բայց ինչ դոկումենտ, բացատրեցէք։

Սիմէօն.(Աչքով անելով) — Դու էլ ինչ ես խօսում, միթէ չես տեսնում, որ մարդս միանգամայն խառնուել է... օ՜, երկիւղալի է, այսպէս յանկարծակի ուղեղի բորբոքումը կարող է վտանգաւոր հետևանք ունենալ։ (Գիլբասարեանին երկիւղով)—Նստեցէք, պարոն Գիլբասարեանց Աշխատեցէք ձեզ խաղաղ պահել, կանգնի, կանգնի, նկատելով սեղանի վրայ օղեկոլոն) ահա՛ ձեզ օդեկոլոն, շփեցէք ձեր քունքերը։

Գիլբ.—Այս ինչ է, սրքա ամէնքն էլ վճռել են ինձ ծաղրել։ Ես կապիկ չեմ, հասկանում էք. և ոչ էլ ձեզ պէս ձեռնածու (Ձպրտելով շիշը) Այդ արդէն չափն անցաւ... դոկտորութեան իրաւունքս եմ խնդրում, դոկումենտ, դիպլոմ. . հասկացէք

Զաքար.—Ես լաւ կանեմ, եթէ մի ոստիկան բերեմ (Դուրս է գնում)

Մակար.—Սորա հիւանդութիւն երևում է որ նոր չէ, բայց ինչը կարող էր սորան այդպէս յուզել, պէտք է անմիջապէս հիւանդանոց տանել։

Գիլբ. (Լացի ձայնով)—Պարոններ, դուք ինձ անպատւում էք և ինչո՛ւ, ասացէք, խնդրեմ.

Ներսէս.—Բայց սպասեցէք միմեանց հասկանանք, գուցէ որևէ թիւրիմացութիւն կայ, (Գիլբասարեանցին) Պարոն Գիլբասարեանց, դուք ասում էք թէ դոկումենտ կորցրիք, այնպէս չէ։

Գիլբ.—Այո՛

Ներսէս.—Բայց որտե՞ղ... այստեղ։

Գիլբ.—Այո, այո՛, ահա այն ձեռագործի մօտ թողի, մի քառորդ ժամ առաջ լրագիր էի կարդում և փոխանակ լրագրի թողեցի իմ դիպլոմը, իսկ թերթը գրպանս դրի։ (Սկսում են ամէնքն էլ որոնել,)

Գոհարիկ.—Նունէ, Նունէ, եկ այստեղ.

ՏԵՍԻԼ 20.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆՈՒՆԷ

Նունէ.—Ի՞նչ կայ հրամայիս, բարիշնա։

Գոհարիկ.—Արդեօք դու այստեղից թուղթ չես վերցրել։

Նունէ.—Վունց չէ, բարիշնա, իժում ով է ասում թէ չիմ վէկալի։

Գիլբ.—Ահա տեսաք, որ ճիշդն եմ խօսում։

Ներսէս.— Յետոյ ի՞նչ արիր։

Նունէ.—Էնգի է։ (Ցոյց է տալիս պահարան)

Գոհար.—Տո՛ւր այս պարոնին։ (Ամէնքը սպասողական դրութեան մէջն են)

Նունէ. (Բանկայի բերանը փաթաթած դիպլոմով հանում է պահարանից և բերում դնում սեղանի վրայ, յետոյ թելը քակելով)—Էս չէ՞, աղա։

Ներսէս. (Հազիւ ծիծաղը բռնելով) —Ի՞նչ, յիմար, երևի դորանով փաթաթեց բաղդրաւենին.

Նունէ.—Վա, ես ինչ անիմ, սառլի վրայ հօ չէր, ես հէնց գիտէի սաղնի թուղթն է։

Գոհարիկ. (Տալով թուղթը Գիլբասարեանցին)—Ներեցէք մեզ, պարոն Գիլբասարեանց, այս մի թիւրիմացութիւն էր, որ աղախինը անգիտութեամբ գործել է։

Գիլբ. (վիրաւորած վերցնելով)—Իսկ ես կասեմ ձեզ, օրիորդ, միանգամայն հիասթափուեցայ ձեզանից. այս կատակը բոլորովին անքաղաքավարութիւն է։

Ներսէս—Բայց, պարոն Գիլբասարեանց, չէ՞ որ...

Գիլբ. (Ընդմիջելով և վերցնելով իւր գլխարկը)—Անկարգութիւն և ուրիշ ոչինչ. (կողմ.) վայրենիք... յիմարներ, և դուք ուզում էք այդ խելքով կուսակցական պայքար մղել... խեղկատակնե՛ր, խեղկատակնե՛ր), (դուրս է գնում) (քիչ լռութիւն, յետոյ ընդհանուր փրթկոց)

Գոհարիկ.—Ահա ձեզ իրաւ խայտառակութիւն։

Ներսէս.—Հա, հա, հա, այո՛ թո՛ղ խրատ լինի և միւս անգամ իւր «դիպլոմով» մեզ չզարմացնէ. (Դիմելով միւսներին)—Պարոնայք, մենք մեր ժողովը վերջացնենք։

Գոհարիկ.—Այսինքն, կուսակցական պայքարը։

Ներսէս.—Այո՛։ (Դուրս են գնում միջին դռնից, վարագոյրը իջնում է)։

Ա. Սարդարեան-Արեւշատեանց։

25-ն յունիսի 1897 թ.

Թիֆլիզ։

ժիշկները հաւատով վերաբերուելու Պարսիկների հաւատով վերաբերուելուն քիչ չի նպաստում և բժ. Ջաւրիանի ու կինբժիշկ Օ. Պ. Լիվինգսթոնի քաղցր ու սիրալիր վարմունքը։ Ծիծաղելին սակայն, թէ ցաւալին, այն էր, որ սկզբներում հիւանդ մարդը միայն չէր փառահում դիմել բժշկին, այլ անպատճառ իրան հետ պէտք էր բերել, երբը, մինչև անգամ չորս մարդ բերէր և ապա մտնէր բժշկի մօտ, բացի դրանից բժշկի մօտ գնալուս ամեն մի հիւանդ իւր յարմարութեանն էր նայում. հիւանդների համար միևնոյն էր թէ բժիշկը ճաշում է, թէ քնած է, մէկ էլ տեսնես դուռը բաց են անում ու հիւանդը իւր հետ բերած առողջ մարդկանց հետ ներս են մտնում, չնայելով որ դրսում ծառաներն ասում են, թէ հիւանդներին բարակում են ընդունում։

Փոքր ինչ հարուստ դասակարգի մարդիկ, մանաւանդ կանայք, հիւանդ ժամանակ իրանք չէին ուզում բժշկի մօտ գալ, այլ մարդ էին ուղարկում իրանց մօտ կանչելու. Երբ հարց և փորձից երևում էր որ հիւանդն առանց դըժուարութեան կարող է բարակ գալ, բըժիշկները մերժում էին, իսկ երբ ասում էին թէ հիւանդը պառկած է և չէ կարողանում կամ դժուարութեամբ է մանգալիս. այն ժամանակ տուն էին այցելում։ Պատահել են դէպքեր, որ հիւանդների տէրերը նեղացել են բժիշկների վրայ, որ չեն գնում տուն իրանց թեթև հիւանդներին նայելու, բայց այդպիսիներն էլ մի երկու օրերից յետոյ իրանք են զղջացել ու հիւանդին բարակ բերել։ Այժմ՝ արդէն փոքր ինչ հասկացել են թէ ինչ ժամանակ պէտք է բժշկին տուն հրաւիրել և թէ երբ պէտք է բժշկի մօտ գնալ. թէև լինում են դէպքեր, երբ անժամանակ գալիս են ու պահանջում՝ որ իրանց հիւանդներին նայեն։

Վերջին օրերս պարսիկները, թէ կանայք և թէ տղամարդիկ, մեծ հաւատով են վերաբերվում դէպի բժիշկները. այնպէս որ այժմ բարակ եկող և թէ տանում այցելած հիւանդների թիւը օրական 50—70-ի է հասնում. այժմ մինչև անգամ մոլլաներն ու աղաները և դրանց կանայքն էլ են սկսել դիմել բժիշկներին։ Հասարակ դասակարգի մարդիկ երբ տեսնում են իրանց մոլլաներին ու աղաներին բարակ գալիս, ասում են՝ թէ դրանք առաջ մեզ խրատում էին բժիշկների մօտ չգնալ, իսկ հիմա իրանք են գալիս։ Ոչ միայն քաղաքացիներն են բժիշկների օգնութեանը դիմում, այլև շրջակայ գիւղերի բնակիչները ձի են բերում ու բժիշկներին տանում իրանց ծանր հիւանդներին նայելու։ Ամբողջ յունիս ամսուայ ընթացքում բժիշկների ընդունելութիւնների ու այցելութիւնների թիւը 1200-ի է հասնում։ Հիւանդութիւնների մեծ մասը ջերմ է և ստամոքսի ու աղիքների կատարը. Լաւ առողջ ու չաղ մարդիկ քիչ են պատահում այստեղի պարսիկների մէջ. ընդհանրապէս դրանց մեծագոյն մասը թոյլ կրծքով է, սաստիկ նիհար. Սրանց երկու սեռի մէջ էլ, ինչպէս իրանք խոստովանվում են բժիշկներին, սաստիկ տարածուած է ափիոն ծխելն ու ուտելը։

Բժիշկներին շատ մեծ դժուարութիւն է պատճառում և շատ ժամանակ էլ խլում տեղական լեզուին անծանօթ լինելը և բնիկների մէջ փոքր ի շատէ ռուսերէն իմացողների դժուարութեամբ գտնելը. եղած թարգմանների թարգմանածից բժիշկները շատ բան գուշակելով են հասկանում։ Իրանք հիւանդներն էլ դժուարութեամբ են հասկանում ու մտքներում պահում թէ ինչպէս պէտք է դեղն ընդունել. բացի այն որ դեղը տալիս մի քանի անգամ կրկնում են, շատ անգամ է պատահում, որ ճանապարհի կէսից յետ են դառնում և մէկ-երկու անգամ էլ հարցնում, թէ ինչպէս պէտք է ընդունել դեղը և ինչ պէտք է ուտել կամ չուտել։ Սրանց համարեա միակ կերակուրը փլաւն է և երբ բժիշկը մի քանի օր արգելում է փլաւ ուտելը, կարծես չեն հաւատում իրանց ականջներին ու զարմացած հարցնում են. «բա՛հ, երեքչորս օր փլաւ չուտե՞մ»։

Պարսիկ ժողովուրդը շատ ծոյլ է. դա լաւ բանում է, երբ գլխին կանգնում և բարկանալով և հայհոյելով ստիպում են բանել, իսկ երբ իրան կամքին է թողած լինում, շատ դանդաղ է բանում. Մի վարպետ, որ 30 ռ. կապալ էր վերցրել դէզինֆէկցիայի փառարանի երկու կողմից երկու փայտեայ սենեակ շինել, երեք շաբաթ աշխատեց և հազիւ կարողացաւ վերջացնել, չնայելով որ առաջին շաբթին իրան հետ բանեցնում էր և ուրիշ երկու վարպետներ։ Պարսիկները ծոյլ լինելուց զատ սաստիկ խորամանկ են։ Պարսիկ վաճառականները իրանց ապրանքների համար երկու գին ունին բնիկների համար իսկական արժէքը, իսկ օտարների համար կրկնապատիկը։

**

ԲԱՔՈՒ, 8-ն յուլիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Մի շաբաթ առաջ հետևեալ ռուսական դէպքը տեղի ունեցաւ այստեղի գիւղերից մէկում, որի համար ընդհանուր զայրոյթ էր երևում թէ կառավարչական շրջաններում, և թէ հասարակութեան մէջ։

Սրիկաներից մէկը, գիւղի գեղեցիկ աղջիկներից մէկի վրայ աչք ունէր, որի համար և դիմում է նրա ծնողներին, ծնողները տալիս են իրանց համաձայնութիւնը, երևի երկիւղից ստիպուած, սակայն աղջիկը, հրաժարվում է, և բողոքում է այն համաձայնութեան դէմ, որ տուել են իւր ծնողները երիտասարդին։

Սրիկայ երիտասարդը, որ ունէր և իւր նման մի ընկեր, որոշում է անպատճառ վրէժխնդիր լինել օրիորդից, այն յանդգնութեան համար, որ նա մերժել է երիտասարդի ձեռքը։

Անցնում է մի քանի օր, այդ երիտասարդները յանկարծ ջրի ճանապարհին հանդիպում են նոյն օրիորդին, և առնելով թէ ձեռքից չփախցնելով, յարձակվում են նրա վրայ և ամեն անարգանքների ենթարկելուց յետոյ, խոցոտում են նրան սրի հարուածներով։

Օրիորդը մեռնում է, և երիտասարդները նրան նոյն դրութեան մէջ թողնելով փախչում են։

Գիւղացիք օրիորդի անշնչացած դիակը բերում են քաղաք և ներկայացնում են կառավարութեան, մի քանի ժամի չափ, դիակը դրսումն էր անց ու դարձ անողների առաջ։

Տեղւոյս ընդհանուր նահանգապետը, Ն. Կ. Մ. Շօս-օ-սալթանէն հանգստացնելով գիւղացիներին, և աղջկայ ծնողներին վերադարձնում է դիակը և կայսն փերաշներ է ուղարկում գիւղերը չարագործներին հետամուտ լինելու։

Կասկած չկայ, որ չարագործները բռնուելուց յետոյ պիտի գլխատուեն։

Արշակ Ուշտունի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ.—Ներքին գործոց նախարարը ստացաւ թագուհու նամակն, որով նա դառնում է անգլիական ազգին. «Դժուար է ինձ, գրում է թագուհին, արտայայտել թէ որքան զգացուած եմ և երախտապարտ այն օրինական համակրութեան և խորին հաւատարմութեան կամաւոր և ընդհանուր արտայայտութիւններից, որոնք ինձ տեսնել վիճակուեցաւ իմ թագաւորութեան 60 տարուայ վերջին։ Ցիրաւի բնական է երկարամեայ աշխատանքից ու հոգսերից յետ իմ սիրելի երկրիս բարօրութեան համար տեսնել, որ իմ ջանքերն գնահատուել են ամբողջ ընդարձակ կայսրութեանս մէջ։ Թէ ուրախութեան և վշտերիս ժամանակ ես միշտ հանդիպել եմ համակրութեան և կարեկցութեան իմ ազգի կողմից, որին նոյն եղանակով էլ պատասխանած եմ։ Անսահման բաւականութիւն պատճառեց ինձ տեսնել, որ իմ հպատակներից մեծ բազմութիւն աշխարհիս ամեն ծայրերից հաւաքուել էր և միաձայն ողջունում էր ինձ հաւատարմութեան ու անձնուիրութեան աղաղակներով և ես կըցանկանայի նրանց շնորհակալութիւն յայտնել երախտապէտ սրտիս խորքից։ Ես միշտ կաղօթեմ Աստծուն, որ նա օրհնէ նրանց և ինձ կարողութիւն տայ ապագայումն էլ մինչև կեանքիս վերջը պարտականութիւնս կատարելու՝ նրանց երջանկութեան համար»։ Լրագիրները թագուհու վերջին խօսքերը գրումն են համարում այն լուրին, թէ նա դիտաւորութիւն ունի հրաժարուելու գահից։

ԶԱՆԱԶԱՆ

Տարօրինակ ազգ են անգլիացիք. ամեն տեսակ տարօրինակ առաջարկութիւնք և գործեր էլ նրանցից է ծագում բստ մեծի մասին. Այսպէս Վիկտորիա թագուհու յոբելեանի ժամանակ Կանադայի անգլիացիք առաջարկեցին, որ թագուհու իւրաքանչիւր հաւատարիմ հպատակ նուիրէ մի պեննի և այսպէս հաւաքուած դրամների-պղնձից ձուլուի թագուհու արձանը և կանգնեցնուի Հայդ-Պարկում։

Նոյն յոբելեանի օրը յարգելու համար Լոնդոնի մամուլի ներկայացուցիչներից մէկը յայտնեց, որ ընծայում է մի մի արծաթեայ գրչածայր երեխանց, որոնք բաղդ կունենան Անգլիայում այդ օրը ծնուելու։

Մօտերումս մի անգլիացի քահանայի և երեք աղախինների միջև մամուլի մէջ վիճաբանութիւն տեղի ունեցաւ. Քահանան մի մանկավարժական լրագրում քննադատելով աղախիններին տրուած կրթութիւնը, գրում է. «Լաւ աղախին և խոհարարուհի լինելու համար ամենևին հարկաւոր չէ լաւ ծանօթ լինել գրականութեան և կարդալ Ռէօսկինի և Կարլէյլի գրուածքները»։ Այս շատ վիրաւորեց աղախիններին, որոնցից երեքը աւելի կրթուածները, պատասխանել են մամուլի մէջ յարգելի պաստորին և ի միջի այլոց իրանց պատասխանի մէջ գրում են. «Մենք չգիտենք թէ յարգելի պաստորն ինչո՞ւ խլում է մեզնից մեր աշխարհահայեցողութիւնը գիտութեամբ և կրթութեամբ ընդլայնելու իրաւունքը—մի իրաւունք, որ բոլոր միւս դասակարգերը վայելում են. Մի՞թէ աւելի լաւ չէ, ազատ ժամերը ընտիր գրքերի ընթերցանութեամբ անցնել, քան ոստիկանների և զինուորների հասարակութեան շրջանում։ Մենք ներքոյ ստորագրեալներս կարդացել ենք Դարվին և Գէքսլի և պատրաստվում ենք Սպենսէրը կարդալու։ Իսկ ինչ վերաբերում է մեր դրացի ծանօթ խոհարարուհուն, նա այցելում է պոլիտեխնիկումի դասախօսութիւնները և մօտիկ ժամանակ իւր լատիներէն շարադրութեան համար ստացաւ վարձատրութիւն։ Երևի յարգելի պաստորը, որ հակառակ է մեր ստացած աւելորդ կրթութեան, շատ պիտի զարմանայ, եթէ ծանօթանայ մեր փոքրիկ գրադարանների հետ, գտնելով նրանց մէջ Բիրրոնի, Սոփոկլի, Պրոսի, Միլլի, Դէքսի, Մօրլէյի և այլոց երկասիրութիւնները և աւելի ևս պիտի զարմանայ մեզ հետ խօսակցելիս, որովհետև պիտի համոզուի, որ մենք այդ գիրքերը ոչ միայն կարդացել ենք, այլ և հասկացել»։

Խեղճ պաստորը ստիպուած էր զէնքը վայր դնել և իւր առաջիկայ մի գրուածքում յայտնում է, որ ինքը ամենևին միտք չէ ունեցել աղախինների մտաւոր զարգացումն վնասակար համարել և որ ամեն աշխատանք նա համարում է ազնիւ։

Ժամանակաւոր խմբագիր՝
Ց. ԽԱՉԱՏՐԵԱՆ
Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը

Թիֆլիզից՝ — հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 8 ժամին (գիշերելով Մլեթ կայարանում) և 10 ժամին (գիշերելով Պասանաուր կայարանում) և հասնում են Վլադիկավկազ միւս օրը, երեկոյեան 7 ժամին և 9 ժամին 10 ռոպէին. Վեց տեղ ունեցող օմնիբուսները Թիֆլիզոց դուրս են գնում առաւօտեան 7 ժամին և 3 ժամին կէսօրից յետոյ և առանց գիշերելու ճանապարհին հասնում են Վլադիկավկազ միւս օրը առաւօտեան 9 ժամին և երեկոյեան 5 ժամին 20 ռոպէին։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 7 ժամին (գիշերելով Մլեթ կայարանում) և 9 ժամին Գուդաուրում) հասնում են Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 7 ժամ 25 ռոպ. և 8 ժամ 15 ռոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբուսները Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 8 ժամին և երեկոյեան 7 ժամին և հասնում են Թիֆլիզ միւս օրը առաւօտեան 8 ժամին 15 ռոպէին և երեկոյեան 8 ժամին։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիզ օրուայ 4 ժամին և 1 րոպ. Թիֆլիզ է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպ։ Դուրս է գնում Թիֆլիզից դէպի Բաթում առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպ.

Մարդատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիզ գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիզ է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ Դուրս է գնում Թիֆլիզից դէպի Բաթում երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ.

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաթումից դէպի Թիֆլիզ առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիզ է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ.։ Թիֆլիզից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից դուրս է գալիս դէպի Թիֆլիզ երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիզ է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ. Թիֆլիզից դուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏԵԱՆԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժական, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—1½—2½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի. Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ.

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՌՈՒՍԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԳՆԶՆԿՈՎԻ)

Սոլօլակ, Գանովսկայա փողոց № 3,

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ՉՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ն. Դ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին բժիշկ ՆԱ. Կ. ԿԱՐՊՈՎԻՉ, ժամը 10—11, ծննդաբերական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՕՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԻԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է. Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լոգարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

Լենքորանի միջասեան օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր է ցենզաւոր ՎԱՐԺՈՒՀԻ ռուսերէնի, հայերէնի և ձեռագործի համար։ Ցանկացողները թող դիմեն պայմանների մասին Լենքորանի հոգաբարձութեան։ (3—1)

Երևանայ Հոգևոր թեմական դպրանոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ Է ՏԵՍՈՒՉ, որ ունենալու է շաբաթական 12 դաս, տարեկան ռոճիկ 1500 ռուբլի։ Ուստի հոգաբարձութիւնն նոյն դպրանոցի խնդրում է ցանկացողներից, շտապել յայտնել իրանց կամքը հոգաբարձութեանս, ուղարկելով ունեցած ուսման վկայագրերը։

Անդամ հոգաբարձութեան՝
Կարապետ Կամսարական։
Քարտուղար Ա. Արշակունի։
(3—3)

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ,

համաձայն հոգաբարձութեանս վճռին, առաջիկայ օգոստոսից պէտք է բացվի՝ լինի ձրիավարժ և թոշակաւոր գիշերօթիկների ընդունելութիւնը. Առաջինների թիւը պէտք է լինի 15, որոնցից երեքը պիտի ընդունուին վիճակիս գաւառական քաղաքներից, Սրբազան Առաջնորդի նշանակելովը, երկուքը քաղաքիս շրջակայ հայ գիւղերից իսկ տասը սեր քաղաքի չքաւոր դասակարգի բնիկներից. համաձայն դպրանոցիս բարերար հանգուցեալ Դիւաշլեանի կտակին. Թոշակաւորների վարձ նշանակուած է տարեկան 300 ռուբլի՝ կէսը օգոստոսին և միւս կէսը յունուարին. Գիշերօթիկների համար պէտք է լինին երկու առանձին դաստիարակներ՝ համալսարանական կրթութեամբ. Ցանկացողները վաղօրօք պէտք է խնդրամատոյց լինին յանուն հոգաբարձութեան թոշակաւորների թուին սահմանափակ լինելու պատճառաւ (25). պէտք է ներկայացնել ծննդեան և պատուաստի վկայականները։

Տեսուչ Գ. Չարխեանց

ԵԼԻՍԱՒԵԹՊՈԼՈՒՄ ՆՈՐԵՐՍ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ծրագիր. 1) Առևտրական թուաբանութիւն, 2) Կրկնակի հաշուապահութիւն—նաւթային արդիւնաբերական գործարանային, առևտրական բանկային և այլն, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Գեղագրութիւն.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ԻՍԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲ. 20-ԻՑ

Դասընթացների հիմնադիր Ա. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ.

Վաճառվում է դասընթացների հիմնադրի նոր գիրքը.

«Նաւթային արդիւնաբ. գործարանային համառօտ հաշուապահութիւն»

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ (20—1)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ինձ մօտ ատլասի կամ մետաքսէ կտորի վրայ նկարած հայ յայտնի գործիչների պատկերները՝ բազմոցի բարձի երես, պատուհանի շիրմա, մետաքսեայ թաշկինակներ, ժապաւէններով (գրքանշան), լուսանկարի 6 կամ 4 պատկերով, յաղճապակեայ ամաններ. Ցանկացողները կարող են ունենալ իրանց պատկերը այդ առարկաների վրայ և կարող եմ ուղարկել ամեն քաղաք մատչելի գնով. Ընդունում եմ աշակերտներ և աշակերտուհիներ մատչելի գնով լուսանկարչութիւն սովորեցնելու։

Հասցէն՝ Тифлисъ, Малая Ванкская ул., д. № 5 А. Родіоновой. (6—1)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեխոսութեան.

բ) Առևտրական թուաբանութիւն.

գ) Առևտրական նամակագրութիւն.


դ) Գեղագրութիւն և ամենայն ձեռքերի ուղղութիւն.

Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ.

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՈԼՕԼԱԿ, Սաղոմյեա փողոց, տուն Մարգարովի, № 27.

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում. Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ.

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց փոստայի ծախս վճարելու. (15—5)



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 23 յուլ. 4 օգ. ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետն է ԲՐԱՆԿԻ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում.

Ապրանքների և ճանապարհորդների [illegible] որ եղած տեղեկութիւններ առնելու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնուին, Նաբերեժնայա.

Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բաբեկենդանեանին, Սիոնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա.

Բագւում.—Պ. Ս. Դեմուրեանին, Պոլիցեյսկինի հրապարակ.

Նովօրօսիյսկում.—պ. Մելխիոր Հեւշինրօզերին. (20—2)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՈՒ ՊԱՆՍԻՕՆ

Պ. Յ. ՂԱՐԱԳԷՕԶԵԱՆԻ

(ԳՈՅՈՒԹԵԱՆ V-ՐԴ ՏԱՐԻՆ)

Աշակերտների ընդունելութիւնը և պարապմունքները կըշարունակուին ամբողջ ամառուայ ընթացքում. Աշակերտները նախապատրաստվում են թէ վերաքննութեան և թէ մտնելու համար բոլոր կառավարչական միջնակարգ դպրոցների ստորին դասարանները. Յունիսի 1-ից աւանդվում է նաև ուսումնարանում ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵԶՈՒ (տեսական և գործնական) փորձուած վարժուհի—ֆրանսուհու ղեկավարութեամբ. (5—5)

Տպարան Մնացական Մարտիրոսեանցի.

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 18